ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սեպտեմբերի 27-ին մեծ շուքով կատարուեց Նորին Վեհափառութեան անուանակոչութեան տարեդարձը։ Նախընթաց երեկոյեան ամբողջ միաբանութիւնը շուրջառ առած հանդիսաւոր կերպով ուղեկցեց Վեհափառին վեհարանից Մայր Տաճար։ Օրնի օրը ս. պատարագ մատուցեց Տ. Մատթէոս եպիսկոպոսը։ Ս. Պատարագից յետոյ Իջման ս. Սեղանի առաջ գոհաբանական հայրապետական մաղթանք կատարուեց, որից յետոյ միաբանութիւնն ու ներկայ ժողովուրդը համբուրեցին Հոգևոր Տիրոջ ս. աջը։ Պատարագից յետոյ միաբանութիւնը գլուխ ունենալով Նորին Վեհափառութեան հոգեհանգիստ կատարեց Տ. Տ. Գէորգ Դ. երջանկայիշատակ կաթուղիկոսի գերեզմանի վրայ, ներկայ էին Ճեմարանի սանները, տեսուչն, ուսուցչական խումբը և ժողովրդի մեծ բազմութիւն։

Ս. Պատարագից յետոյ Վեհափառին ներկայացան և շնորհաւորեցին անուանակոչութեան օրնը՝ Ճեմարանի ուսուցչական խումբը, տեղական պաշտօնական հաստատութեանց ներկայացուցիչները, Երևանից եկած փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսը Երևանի կրթական հաստատութեանց ներկայացուցիչների հետ միասին, և Վաղարշապատի ու մօտակայ ժողովրդոց ներկայացուցիչները։

Երեկոյեան վանքի բակում հրաւառութիւն կար օրնի առթիւ։

Վեհափառը զանազան տեղերից ստացել է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։

Ճեմարանի տօնը.

Սեպտեմբերի 27-ին ս. պատարագից յետոյ Գէորգեան ճեմարանում կատարուեց սովորական տարեդարձը։ Ներկայ էին միաբաններն ու ժողովրդականք։ Տեսուչ պ. Ս. Մալխասեան կարդաց 1913/4 ուսումնական տարուայ տեղեկագիրը։ Ուսուցիչ պ. Ռ. Տէր Յակոբեան բանախօսեց։ Մէջ ընդ մէջ երգում էր երգեցիկ խումբը։

Երեկոյեան ճեմարանի բակում հրաւառութիւն կար տօնի առթիւ։ Այս տարի պէտք է տօնուէր ճեմարանի 40 ամեայ յոբելեանը, բայց պատերազմի պատճառով յետաձգուեց աւելի բարեպատեհ ժամանակ տօնելու։

Եպիսկոպոսական ձեռնադրութիւն

Սեպտ. 28-ին Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը եպիսկոպոս ձեռնադրեց Տաճկաստանի Կեսարիոյ առաջնորդ Տ. Խոսրով ծ. վարդապետ Պէհրիկեանին և Ատրպատականի առաջնորդ Տ. Ներսէս ծ. վարդապետ Մելիք Թանգեանին։ Պատարագիչն էր Նորին Վեհափառութիւնը, վկաներն էին Տ. Անանիա և Տ. Մահակ արքեպիսկոպոսները, խարտուիլակը Տ. Աշոտ եպիսկոպոսը։ Հաւաքուել էր ժողովրդի մեծ բազմութիւն տեսնելու եպիսկոպոսական ձեռնադրութեան փառաւոր հանդէսը։

Վեհափառ Հայրապետն բարեհաճել է սեպտեմբ. 28-ի թուակիր Հայրապետական կոնդակով Իւր բարձր հովանաւորութեան ներքոյ առնել Հայ ժողովրդի եղբայրական օգնութեան գործը, որի նպատակն է ամեն կերպ խնամել պատերազմից վերադարձած վիրաւոր և հիւանդ զինուորներին ու նիւթապէս օգնել նրանց անօգնական ընտանիքներին։ Սեպտեմբերի 28-ի կոնդակը տպագրուում է «Արարատ»ի սոյն համարում։

Բ. վ. Ա.